թեանց թագաւոր Կայսրին արծաթեայ սկուտեղ, թագուհի Կայսրուհւոյն Թէքինեան զոլգեր և Թէքինի կանանց բազմապան ձեռագործներ։ Իսկ թագաժառանգին այն սուրը, որը 1860 թ. խլուած էր պարսից գլխաւոր հրամանատար աղքայորդի Համզա – Միրզայից։

Այդ պատգամաւորութիւնը հրաւիրում էր իւր վերայ բոլորի ուշադրութիւնը իր ազգային զանազանակերպ զգեստներով, թաւշեայ ոսկեթելերով կարած և դիպակի զգեստները. գլխներին ազգային գլխարկներ, այդ ամենը ներկայացնում էին մի առանձին պատկեր։

Պատգամաւորութիւնների թւում արժանացաւ ներկայանալ Նոցին Մեծութիւններին Խանուհի Գիւլ – Ջամալ – Բայը, Նուրվէրդի խանի այրին իւր որդկերանցով, որը առաջին քարոզողն էր Թէքէյի ցեղերը ռուսաստանի հետ միաւորելոյն։ Ժամը երեքին կէս անցած՝ Նոցին Կայսերական Մեծութիւնք և Բարձրութիւնք բարեհաճեցին բաղդաւորացնել իրանց այցելութեամբ քաղաքային յանուն Կայսրուհւոյն իգական գիմնազիոնը, ուր երկու աշակերտուհիներ մատուցին Նոցին Մեծութեանց ծաղկանց փնջիկ և երգեցին՝ «Օրհներգութիւն Աստուծոյ» երգը, որը կատարուեց խմբովին 300 երգեցողաց ձայնակցութեամբ և երգեհոնի մասնակցութեամբ, որը տպաւորեց կատարեալ ազդեցութիւն ամենի վրայ։

Ցիրաւի երգի ազդեցութիւնը դերազանց թուեցաւ։ Նոցին Մեծութեանց դնալու ժամանակ՝ սանդուղքների երկու կողմից աշակերտուհիները ճանապարհը ծաղիկներով փուեցին։ Աշակերտուհիները ժողովեցան դպրոցի հանդիսարանը, որ զեղեցիկ յարմարութեամբ զարդարուած էր բոյսերով և ծաղիկներով. մէջ տեղը կանգնեցրած Նորին Մեծութեան արձանը ծաղիկներով զարդարուած. իսկ Նորա ոտքերի առաջ գահաւորակ աղքայական ընտանիքի համար։ Օգոստափառ այցելուները մտնելով դահլիճը, բարեհաճեցին լսել երկու պիեսներ, որից յետոյ 300 ձայներ խմբովին կատարեց «Բագվեան Զայկովսկոյ» խմբի ներդաշնակ գեղեցիկ երգը, թանկագին հիւրերի վերայ զեղեցիկ տպաւորութիւն թողնելով։ Համերգը վերջանալիս Նոցին